

մասնակցից: Ընտրութիւնները կը կատարուին չափաւոր հանրապետական ուղղութեամբ և աչքի առաջ չեն ունենայ սահմանադրութեան վերաբնութիւնը: Այնուհետեւ մինիստր Ֆերրի մասնացոյց եղաւ արմատականների անդորութեան և այն վերանորոգութիւնների վրա, որոնց իրագործելն չափաւոր հանրապետականները: Նա յայտնեց, որ հանրապետութիւնը ժողովրդի վճարած հարկերը 260 միլիոնով փոքրացրել է: Ապա յայտնեց ընտրութիւնների իսկական նպատակն է մինչ այն աստիճան թուլացնել միապետականներին, որ, եթէ մինչև անգամ նրանք միանան արմատականների հետ, այնուամենայնիւ անկարող լինեն փնտել հանրապետութեանը: Նրկիր վրդոված չէ, շարունակեց Ֆերրի, այլ ընդհակառակը բաւական է, տեսնելով իրագործված վերանորոգութիւնները, տեսնելով, որ Ֆրանսիան ոչնչացրած չէ, որովհետև նրան անկարելի է ոչնչացնել: Հանրապետութեան համար անհրաժեշտ է բոլոր կուսակցութիւնների միարանութիւնը և Գրեվիի խոհմութիւնը:

Մարսելից հաղորդում են, որ յունիսի 7-ին առաւօտեան 8 ժամից մինչև երկուշիս 11 արիւնահեղ կռիւ է եղել խաղաղիներ և Ֆրանսիացիների մէջ: Ասում են, որ երեք մարդ սպանված են և շատերը վիրաւորված: Քաղաքային խորհրդարանի նիստերը անընդհատ շարունակվում են: Քաղաքի հիւրանոցները փակված են: Մարսելի գանազան մասերում կռիւը շարունակվում է: Հանրապետական պրօկուրորը արգէն քննութիւն է սկսել և 65 մարդ կաշնաւորված են:

Հանրապետութեան նախագահ Գրեվի յայտնել է մի քանի պատգամաւորներին, որ նա չի այցելի Ֆրանսիայի հարաւային մի քանի նահանգները, որովհետև շատերը այդ ճանապարհորդութիւնը կարող են ներանով մեկնել, որ Գրեվի կամենում է ազդել պատգամաւորների ապագայ ընտրութիւնների վրա:

Ֆրանսիական լրագրիները միաձայն պատարակում են գլխաւորական ծառայութեան ժամանակամիջոցի փոքրացնելը: Միայն «Republique Francaise» լրագիրը պաշտպանում է այդ օրինագիծը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունական մինիստրութեան մէջ մի քանի

անկմանը և մասնաւոր նրա մասնաւոր խաղաղութիւնը, կեղտոտ, կոյր, նեղ, զգուշ, ետական, —այդ անկանները դուք կը գտնէք ամեն մի քաղաքականում: Եւ կը բերեմ միայն այստեղ բուլղարական «Народный Гласъ» լրագրի խօսքերը Բիկոնսֆիլդի մասնաւոր առիթով: Լորդ Բիկոնսֆիլդը վախճանվեցաւ Անիտապաւ նա խոր մտութեան մէջ, եւ Լոնդոնից մինչև Բատակ Ամեն աղիւս մարդ խնդում է, «Այո—շարունակում է լրագիրը—յիշելու արժանի է այն մարդը, որի անուան հետ չարագուշակ կերպով կապված են մեր պատմութեան վերջին օրերը: Այդպիսի մարդիկների անունը հետ չէ մոռացվում: Այն մարդը, որ Ներոնի կամ Կալիգուլայի պէս ծափահարում էր սարսափելի թշուառութիւններին, որ իր քաղաքականութեամբ յարուցեց մեր երկրի աւերումը, որ վերջին պատերազմի պատճառը եղաւ, որ երկու միլիոն ժողովուրդ ստրկութեան հասցրեց—այդպիսի մարդը, այո, արժանի է յիշելու, արժանի է և անէծքների:»

Պ. Քաղաքային իրան յատուկ սրամտութեամբ մտաւոր զեղխութիւն է համարում Բիկոնսֆիլդի վրա յարձակվելը, որովհետև նա «Անգլիայի զեկավար էր... Նրա վրա աշխարհը զարմա-

նի փոփոխութիւններ կատարվեցան, որոնք արտաքին գործերի հետ ոչինչ յարաբերութիւն չունեն: Կօրինքի պարանոցը փորկու և նրան ջրանցք դարձնելու մասին պայմանագիրը յանձնվեցաւ: զենեքալ Տիւրին, որ այդ գործին ձեռնարկում է Լեսսուպի հետ: Այդ ձեռնարկութիւնը մտադրված էր զեռհին ժամանակներում և Ներոնի թագաւորութեան ժամանակ աշխատանքները ըսկւված էին: Բեկա Գերստեր, երկրաչափ ուղեւորվեցաւ Կօրինքի աշխատանքների համար պատրաստութիւններ տեսնելու նպատակով: Գործը աշունքին կը սկսվի: Ջրանցքը պէտք է պատրաստ լինի հինգ տարուց յետոյ: Չմեռ ժամանակ փտանգաւոր Մատականի մօտ իւրաքանչիւր տարի անցնում են 1,300 փոստային շոգենաւեր, նոյնքան աւելորական և մասնաւոր և 300 պատերազմական: Ջրանցքը փորկուց յետոյ Ագրիական ծովից գնացող շոգենաւերը 24 ժամ կը վաստակեն, իտալիայից գնացողները 14—18, իսկ Գերբաւտարից 8 ժամ:

ԱՐԵՎԵԼԵԱՆ-ԲՈՒՄԵԼԻԱ

Ֆիլիպպոլից հաղորդում են, որ Բուլմիայի մէջ եղած պատգամաւորների ընտրութիւնների ժամանակ կուսակցական կռիւները մինչև այժմ չեղած չափերի են հասել: Նահանգներից ստացված տեղեկութիւնների համեմատ մի քանի ընտրողները մինչև անգամ անձնական անբաւականութիւններ են ունեցել, այնպէս որ ընտրութիւնների ժամանակ պատահած անկարգութիւնների պատճառով ներկայումս բաւական շատ քրէական գործեր են սկսված: Արմատական և չափաւոր կուսակցութիւնները կարողացան հաւասար թուով պատգամաւորներ ընտրել: Ընդամենը պէտք է 18 պատգամաւորներ ընտրվելին, որոնցից 9 չափաւորներ են, իսկ փնտաւորները արմատական: Պատգամաւորներից 16 մարդ բուլղարացիներ են, իսկ երկուսը թիւրք: Մինչև անգամ Ֆիլիպպոլի մէջ քաղաքական կռիւը չափազանց աղմկալի էր: Այդտեղ բուլղարացիները ընդգիմադրում էին թիւրքերին և յոյներին: Նրբ կասկածելի դարձաւ, որ բուլղարացի կանգիդատը կարող է ստանալ ձայների մեծամասնութիւն, Ֆիլիպպոլի կալիսոպոսի միջնորդութեամբ բուլղարացի կուսակցութիւնները միացան և համաձայնութեամբ բուլղարացիները Այնու ամենայնում էր:

Հանձար էր: Հանձար էր: Ի՞նչ է դուք գալիս: Ամբողջ ազատամիտ մասնաւոր ներկայացուցիչները, որոնք բոլոր ոյժով յարձակվում են Բիկոնսֆիլդի վրա, մտաւորապէս զեղխված են: արեգակի լոյսի պէս պայծառ և անարատ միտք պահպանել են միայն Կատկովը և «Մեղուի» ուշուցնատուները, որոնք երկրպագում են հանգուցեալ լորդի յիշատակին: Ուրեմն, պ. Քաղաքային, ձեր լոգիկայով բաւական է միայն զեկավար լինել, ետականութեան և լրբութեան հանձար լինել և աշխարհ դարմանել զրանով—որ պատկառելի անուն ժառանգել: Ուրեմն, Բիսմարկի առաջին պէտք է խոնկ ծխեք, Մանկունու ձեռքերը լիւնեք, Յովհաննէս 4-րդ յիշատակը սուրբ համարեք, ձեզ էլ խօս, պ. Քաղաքային: Ձեր անիմալ խմբագրատան բալկոնի հանդէպ արձան կանգնեցնեք, որովհետև ուշուցնատուութեան հանձար էր... Չէ որ ձեր սրամիտ գրութիւնը այդ թույլ է տալիս:

Գուք, պ. Քաղաքային, ինձ անուանում էք մանուկ, կաթնակեր: Կը նշանակի ես այժմ միտք է անգարագացած մարդ պէտք է լինեմ: Եթէ այժմ ես այդպէս եմ, ուրեմն ի՞նչ պէտք է լինէի սրանից 7 տարի առաջ, չէ որ մի բուրբոն յիմար երեխայ... Իսկ 7 տարի սրանից առաջ ես սարսափելի մեղուական էի, և «Մե-

նիւ թիւրք կանգիդատը ձայների նշանաւոր մեծամասնութիւն ստացաւ: Արիւնսօպոլից ստացված տեղեկութիւնների համեմատ այնտեղ սպասում են Բեռլին-Փաշայի վերադարձին, որին համապատասխան իշխանի ամբողջ ազգաբնակչութիւնը: Բեռլին-Փաշա նոյնպէս ցանկանում է վերադառնալ և նրա կուսակցների կարծիքով այդ ցանկութիւնը կը կատարվի:

ԻՏԱԼԻԱ

Հռոմի ամառկրներին մէկի մէջ «Զօրքեր և քաղաքականութիւն» վերնագրով տպագրու գեներալ Մեցցակապօ յօդուածը, որով հեղինակը աշխատում է ապացուցանել, թէ իտալիան իր գինուորական ոյժերը պէտք է յաւանդէ և հասցնէ այն դրութեանը, որի մէջ գտնվում են այլ ազգութիւններ: Նրբ գործը անհրաժեշտ է ոչ թէ նուաճողական նպատակների, այլ իտալիայի անկախութիւնը պաշտպանելու համար: Հեղինակը ապացուցանում է, որ վերջին պատերազմների փորձերը անհրաժեշտ են դարձնում ամբողջների կառուցանելը: Գեներալ Մեցցակապօ խորհուրդ է տալիս իտալական պարլամենտին մի անգամից հաստատել զօրքերի դրութիւնը բարելուելու համար անհրաժեշտ գումարը և նրա հատուցումը բաժանել երեք տարիների վրա: Վերջը նա աւելացնում է, որ իտալիայի գինուորական ոյժերի բարեւոյցը եւրօպական քաղաքականութեան համար մի գրաւական կը լինի:

Իտալիայի մէջ երկու անգամ միմեանց ետեւից պատահած մինիստրական դժուարութիւնները ստիպեցին պարլամենտին զգուշութեամբ գործել: Ազատամիտ կուսակցութեան անդամները համոզվեցան վերջապէս, որ աւելի հեշտ է կորցնել իշխանութիւնը, քան թէ նրան ձեռք բերել: Նրանք անհրաժեշտ համարեցին գոնեա ժամանակաւորապէս թողնել անձնական հաշիւները և օգնել կառավարութեանը ընտրողական օրինադրված վաւերացնելու համար, որի ուշացնելու պատճառը միշտ այդ կուսակցութիւնն էր գտնուում:

Պարլամենտը արգէն վաւերացրեց ընտրողական օրէնքի գլխաւոր կէտերը և այդ աշխույթեան պատճառը նոր մինիստրութեան եռանդոտ բնթացքն էր:

Ընտրողական օրէնքի հեղինակ՝ արդարութեան մինիստրին բաւական դժուար էր

հերքել իր բազմաթիւ հակառակորդների ասածները: Նրա ճառը շարունակվում էր երկու նիստ և երեւում էր, որ այդ մասնագէտը հարցը բազմակողմանի ուսումնասիրել է և անուշադիր չէ թողել հարցին վերաբերեալ պատմական և վիճակագրական տեղեկութիւնները: Գրանից լաւ պաշտպան կառավարչական օրինագծի համար անկարելի էր գտնել:

Այսպիսով ընտրողական վերանորոգութիւնը երկակայութեան իրականութեան է հասել: Այսուհետեւ վիճարանութիւններ կարող են ծագել ընտրողական եղանակի մասին:

ԱՆՊԼԻԱ

«Daily News» լրագրի խօսքերի համեմատ անգլիական կառավարութիւնը մի շարքերական ուղարկեց Միացեալ-Նահանգների կառավարութեանը, որ ուշադրութիւն է դարձնում Ֆենիկների ցոյցերի վրա, որոնց կենտրոնատեղին Նիւ-Եօրկն է: Իրանգական վարչութիւնը արգելեց ժողովներ Կլիւարի և Մենապի մէջ և ազդարարութիւններ հրատարակեց, որոնք համոզում են ազգաբնակչութեանը չը մասնակցել Կօրկի կոմսութեան մէջ լինելու ժողովներին: Կուրլինում կալուածական միութեան ժողովի մէջ արտասանած վերջին ճառերը չափաւոր ընտրութիւն ունեն: Հառախօսները պատարակում էին զօրքերին արած ընդդիմադրութիւնը, որովհետև երկու կողմի ոյժերը հասարակ չեն, բայց համոզում էին Ֆերմերներին ընդդիմանալ կալուածատէրերին:

«Doterel» նաւի կորուստը, Ալիկապոլի և այլ տեղերում կատարած յանցաւոր փորձերը ոգևորեցին Միացեալ-Նահանգների Ֆենիկներին, աւելացրին նուիրատուութիւնների չափը և զօրեցին իրանց ընդդիմադրութիւնը: Ամերիկայի Ֆենիկները յայտնեցին, որ նրանք գիտէին «Doterel» նաւի ձայնները լու մտադրութիւնը:

Գլխաւոր մտադիր էր առաջարկել համայնքների ժողովին, որ նա շտապեցնէ կալուածական օրինագծի քննութիւնը, բայց մինիստրը այդպիսի առաջարկութիւն չարաւ, որովհետև մի կողմից չէր կամենում զայրացնել ընդդիմադրական կուսակցութեանը, իսկ միւս կողմից յոյս ունէր իր ժամանակին վաւերացնել օրինագիծը, առանց սահմանափակելու համայնքների ժողովի:

Տօրիներ և վիգելի քաղաքականութեան ծանօթանալու համար թող «Մեղուի» պատմաւորան կարգալի գր. Ֆիլիպ «Die Verfassung Englands» վերնագրով գրքը: Վիլիամ Լեկկի «Անգլիայի պատմութիւնը XVIII դարում» և գոնէ ուս ազատամիտ լրագիրներ ու ամսագիրներ:

Թիֆլիս.

Ս. Գաբանց

ազատութիւնը: Համայնքների ժողովի ան-
գամները մէկը կառավարութեանը հարց
առաջարկեց Անգլիայի ապագայ յարաբե-
րութիւնների մասին Տունիսի հետ Արտա-
քին գործերի միջնորդը ստանուծիւմը բն-
գունեց այդ հարցը և հրաժարեցաւ նրան
պատասխանել, որովհետեւ պարլամենտական
սովորութեան համեմատ միջնորդութեանը
այդ հարցի մասին առաջուց ոչինչ յայտնի
չէր:

Այս ստորալիայից գանգատներ են ստացվում
չինացիների գաղթականութեան գէմ, որոնց
թիւը 20,000-ի է հասնում: Գաղթողները
կատարելապէս աղքատ մարդիկ են և չա-
փազանց նեղացնում են տեղացի բնակիչնե-
րին:

ՆԱԽԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

Վան, 5/17 յունիս 1881

Նախորդ նամակովս ձեզ տեղեկութիւն տուած
էի թէ Վանի ծովին հիւսիսային արեւմտեան
կողմը խաթ գաւառին մէջ երկրաշարժի վտանգ-
ներ պատահած են. այս անգամ մանրամասն կը
գրեմ:

Խաթ գաւառը ծովին արեւմտեան կողմին է
դէպ հիւսիս: Դատ բարերեր տեղ է և պատուա-
կան տեսակ ցորեն կենէ, որ դիր կը կոչուի և
ուրիշ կերպով կը ցանուի քան թէ սովորական
ցորենները: Անցած տարի սովի ժամանակ Վանի
հաց մատակարարող ամբարներէն մին ալ խաթ
եղած է: Այդ գաւառը նախ Մուշի կառավար-
չութեան տակ էր, բայց երբ Բաղէշ և Մուշ
Վանի նահանգէն բաժնելով առանձին նահանգ
կազմուեցաւ, խաթ գաւառի կազմակարգ ուղ-
ղակի Բաղէշի իշխանութեան տակ մտաւ: Այս-
մակամի (գաւառագետ) նստած տեղը ծովեզե-
րեայ նաւահանգիստ գիւղ մ'է որ Ախաթ կամ
Խարապաշէն կը կոչուի: Այս գաւառին մէջ
ամենէն բազմամարդ գիւղն է Թեղուտ, որ բոլ-
րովին հայաբնակ է և ունի 180 տուն բնակիչ:
Երկրորդն է Ժամ հեռի է, երկրաշարժի մեծ
զոհն եղած է այս գիւղն որ բոլորովին քանդ-
ված է. մի տուն անգամ չը կայ կանգուն մնա-
ցած: Երկրաշարժի սաստիկ ցնցումը եղած է
մայիս 18 առաւօտեան 6 1/2 ժամին (ըստ երո-
պացոյ): Այդ ժամանակ գիւղին երիտասարդ-
ները իրենց տաւարներով գնացած էին լեռները
և կամ արտերը աշխատել, որով վտանգէն ազատ
մնացած են. բայց կիները, մանուկներ, և ծերերը,
որոնք գիւղին մէջ իրենց տունը կը գտնվէին,
փրատակներուն տակ թաղուած են: Թեղուտ
Բաղէշէն 7 ժամ հեռի է. երբ Բաղէշ կիմացոյի
այս ստակալի գէպը (երկրաշարժի սաստիկ
ցնցումները Բաղէշի մէջ ալ զգալի եղած են),
նահանգապետ փաշան Թեղուտ կը զրկէ խաչմա-
նուկեան Աւետիս էֆենդին և զինուորական բը-
ժիշկ զօխտոր պ. Պօղոս և ստականապետը
(պօլիցիայի գլխաւորը) մի քանի զաւթիանե-
րով որոնք իրենց հետ վրաններ կը տանեն բաց
մնացած գիւղացիները պատապարելու համար:

Փրատակները սկսած են փորել, որոց տակէն 92
մուտակ դուրս եկած է, 40 արական և 52 իգա-
կան սեռէն. 55 հոգի ալ վիրաւորված, որոցմէ
չատերուն բժշկվելու յոյս կայ, բայց 12 մահա-
ցոյ վիճակի մէջ են: Կառավարութիւնը բացի
մի քանի վրանների զրկելէ ուրիշ օգնութիւն չէ
արած նոցա ուստիս համար: 125 չափ ցորեն
փոխ տուած է միայն այդ վրանուած մարդոց
որպէս զի յետոյ տուածը յետ առնէ: Վանի
անգլիական դեր-հիւպատոս պ. Կլէյտոն, որ
խաթ գնացած էր երկրաշարժէն վնասուողնե-
րուն օգնելու, 50 օսմ. ոսկի (450 բուրլու չափ)
բաժնել է նոցա առ այժմ և Վան վերադառնա-
լով տեղեկագրած է այս դէպքը իւր կառավա-
րութեան:

Երկրաշարժէն մի օր յառաջ արդէն նշաններ
սկսած էին երևիլ Թեղուտէն երկու ժամ հեռու
գտնուող Եղալ գիւղացի մի հայ՝ Ներսիս
(Ներսիս) լեռին չիջակայ անտառները կերթայ
փայտ կտրել և ահագին որոտումի ձայներ կը
լսէ Ներսիսի տակէն: Ներսիսի ստորտը
տափին վրայ ջերմուկներ կան, ուր գիւղացիները
կը լուացուին: Երկրաշարժէն մի օր յառաջ մի
գիւղացի ջերմուկ կը մտնէ լուացուելու համար,
բայց ջրին մէջ քամի ելած այնպէս սաստիկ կը

յուզէ եղեր, որ զինք դուրս կը մղէ և գիւղացին
փախնալով դուրս կենէ ջրէն: Ներսիսի լեռը
400 տարիի չափ յառաջ հարուխ մը բացուած
է որմէ դուրս վազած լաւաները դաշտին մէջ
քարացած են: Այդ քարացած լաւաներու տե-
ղը շինուած է Թեղուտ գիւղը, Ներսիսի լեռի
ստորտի տափին վրայ: Նոյն տափին վրա զը-
սնուած Սրբաշնոր գիւղն ալ, որ Թեղուտէն 2
ժամ հեռի է և բոլորովին հայաբնակ 20 տուն
բնակիչով, երկրաշարժի ցնցումներ եղած են,
բայց 2—3 տուն միայն քանդուած է առանց
անձանց կորուստի: Նոյնպէս և Ախաթ գիւղն,
որ Թուրքերէն Խարապաշէն կը կոչուի (15
տուն հայ կայ և 100 տուն թուրք):

Ձեր ընթերցողներուն հարկ չը կայ մանրա-
մաս նկարագրել թէ ինչ տեսակ թշուառութեան
մէջ կը գտնուին այժմ երկրաշարժէն իրենց անձը
հազիւ ազատած գիւղացիները: Այս տուն ունին
այժմ արեւն և անձրեւն պատապարուելու համար,
ոչ մի վերմակ գիշերը իրենց վրայ ծածկելու
համար, ոչ ալ մի պատու հաց ուտելու համար:
Լեռներ, սարեր կը թափառին մուրաւ վայրենի-
ներու պէս, ապառաժ քարերը իրենց զինարարձ
կանեն գիշերները և խոտ ուտել ստիպուած են
չը մնանու համար: Արդէն աղքատ և թշուառ
թեղուտցիներու *) ալ ժաման ստակալի վիճակը՝
ոչ թէ մի հայ, այլ մի քարաւոր մարդ անգամ
լսած ատեն սիրտը կտոր կտոր կը լինի: Երբ
անգլիացիները այդ խեղճ գիւղացիներուն կու-
զին օգնել, կարելի է միթէ որ մեր ռուսա-
տանցի արեւմտակիցները անտարբեր մնան: Այլ
լսեմք որ պ. Կառավարականն ալ իւր կառավա-
րութեան գրած է այս ստակալի դէպքին համար
և նորա գլխավորին խնդրած է Պ. Կառավար-
կան ձեռքէն եկած օգնութիւնները չը խնայել:
Խորմեան հայրիկ, որ պաշտօնով Բաղէշ կը զրկէր
արժ. Սիրտակէս Տէր-Սարգսեանց վարդապետը,
յանձնարարեց որ Թեղուտ ալ երթալով, կարելի
եղած օգնութիւնները անէ երկրաշարժէ վնաս-
ուողներուն: Արժ. Վանդ վարդապետ փրկող
լէմանն ալ երկու օր յառաջ այնտեղ զրկուե-
ցաւ: Խորմեան հայրիկէն, նոյն պաշտօնով:

Եւ յիս իրադրուածը դեռ Վան քաղաքն է:
Նահանգապետ փաշան հեռագրով տեղեկութիւն
խնդրած է Բ. Վուսէն թէ մինչև որ ատոման
պատուաւոր կերպով պէտք է որ Կ. Պօլիս
տանին չէլիւր:

Պ. Փորթուգալեանի հարցաքննութիւնը կառա-
վարութեան առջն գեռ կը շարունակուի: Թէ
ոչինչ չէ կրցած հաստատուիլ իւր վրայ, բայց
կառավարութիւնը կը ջանայ զինք յանգաւոր
հանել որպէս զի այստեղ աշխատող երիտա-
սարդները յուսահատուին: Բայց մի և նոյն
ժամանակ ստիպուած է խոհեմութեամբ վարուիլ:
Փորթուգալեանի ժողովրդական մարդ լինելէն
զգուշանալով: Միայն թէ Սրբաշնորեանց Գա-
րեգին վարդապետ որ իւր առաջնորդական փո-
ղի վարով ալ ինչորի մէջ, Թէն աղագային վար-
ժարաններն առաջնորդի իրաւասութեան տակ
լինելով և Փորթուգալեանի ատենախօսութիւնն
ալ Հայրենասէր ընկերութեան վարժարանին մէջ
եղած լինելով, Գարեգին վարդապետի պարտա-
ւորութիւնն էր միջամտել այս խնդրին: Բայց
չատեր կատեն որ Գարեգին վարդապետ կաշի-
տի կառավարութեան միջոցով ճշեւել այստեղի
երիտասարդութիւնը, որ հրապարակին վրայ աղ-
գեցութիւն ունեցող և գործող խումբ մը չը
գտնուի, որպէս զի նահանգապետ փաշային մի-
ջոցով, որուն հետ շատ մտերիմ բարեկամ եղած
է այժմ, կարենայ Վանի առաջնորդ դառնալ:
Ստակալի ապերախտութիւն մը գործելով իւր
բարեկար և ուսուցիչ խորմեան հայրիկի գէմ որ
այժմ Վանի առաջնորդն է, Թէն աղագային գոր-
ծելու կառավարութիւնը յանձնած է իւր փոխա-
նորդ Գարեգին վարդապետին, որպէս զի այդ
փոքրիկ մարդուն փառասիրական փոքրիկ ըզ-
գացումները գէթ այդ կերպով յագեցած լինին:
Խնջ ժամանակի եկած հասած ենք որ մեր ա-
մենէն աւելի աղքատեր և հայրենասէր կարծած
վարդապետներն ալ աղցի դաւաճան և ապի-
րախտ դուրս կը գան: Խնջեր կը սպասէինք:

*) Թեղուտ գիւղը 300,000 զրուշ (27,000
բուրլի չափ) պարագ ունէր թէ կառավարու-
թեան, ստորդի պատճառով, և թէ հայերու և
քուրդերու որոյմէ ստիպով փոխ ստակ առած
են գիւղացիները Պարթի պատճառով Թեղուտ
գիւղէն 136 մարդ պանդխտած կայ յորոց 132
Կ. Պօլիս կը գտնուին և 4 առաջնայատան:

մենք Գարեգին վարդապետէն և ինչ եկաւ
դուրս: Արդեօք պէտք չէ բնաւ կատարել վրա-
տահութիւն ունենալ այդ սեղագետներուն դա-
տակարգէն եղող ոչ մէկին վրայ ալ: Մեր
պատասխանը բացասական պիտի լինէր եթէ
հրապարակին վրա վարժապետեան Ներսիսներ
և խորմեան հայրիկներ ալ չը գտնուէին:

Հրանտ

ՆԱԽԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 16 մայիսի

Երեւանում հրատարակվող հայ լրագրի 16 հա-
մարում տպվեցաւ մի թղթակցութիւն Թաւրի-
զից, որի մէջ անադիւն կերպով չօշափում էր
պ. Ս. Տէր-Չաքարեանի պատիւը: Բիշեալ թղթ-
թակցութեան հեղինակը Բ. Հաւաճեանն է, մի
յայտնի արկիւյ, որ Օրբելեանների կտակը Հընդ-
կաստանում յայտնվելուց յետոյ, աղգանուէր
փոխեց, սկսեց իրան Օրբելեան կոչել, որպէս
զի այդ պարսաւ կտակից մի պատառ էլ իւր բե-
րանը գցէ: Ի հարկէ, ոչինչ չը ստացաւ:

Թէպէտ ոչ ոքին հետաքրքիր չէ գիտնալ մի
որ և ինչ բախտախնդիր Հաւաճեանի կենսագրու-
թիւնը, բայց ցոյց տալու համար, թէ արկիւի
անձինք կամենում են մեր միաւրտ հասարակու-
թեան մէջ դեր խաղալ, նրա խաղաղութիւնը
վրդովել, երկպառակութիւն սերմանել և ջրի
պղծութեան մէջ ձուկ որսալ, — ես կտոմ ալ
պարտի մասին մի քանի խօսք միայն:

Պարտի իր մանկութեան հասակում ուղարկ-
վեցաւ իւր աղքատ ծնողներից Վարդապետ, որպէս
հասարակ ծառայ, սպասաւոր, որ իւր համար մի
պատառ հաց գտնէ: Անտեղից, յայտնի չէ ինչ
անկարգութեան համար, փախաւ Տաթևի վանքը,
ուր մի քանի տարի մօնթեթիւն անելով, վար-
դապետների կօշիկներ սրբելով, գրեկ-կարգալ
սովորեց: Վերադառնալով մեր հայրենիքը, Թաւ-
րիզ, նա մի ժամանակ փոստատան նամակ բա-
ժանող էր, մի ժամանակ էլ սահմանադրուի վրա
թէ և ք իւր ա ճ է ի (անցաթիղթեր նայող): Սպա-
ւոր էր: Այլ որ փոքր ի շատէ ծանօթ է Պարս-
կաստանին, կը հասկանայ, թէ ինչ կը նշանակէ
թէ և ք իւր ա ճ է ի սպասաւոր լինել: — Այդ կը
նշանակէ սահմանից անցողարձ անող պարսից
հպատակ խեղճ մշակներին կողմուտի:

Չը նայելով, որ պարտը ընտրուած էր ծառա-
յութիւնների ամենացածր, ամենատնայութիւր,
այսու ամենայնիւ, ամեն տեղում խայտառակ-
վեցաւ նա, ամեն տեղից արտաբոլեցաւ նա:
Այսպիսի անաշուղտները մեզ մօտ, երբ ուրիշ
գործ չեն գտնում, առհասարակ տէրտէր են
դառնում, բայց պարտը մտածեց վարժապետ
դառնալ:

Նա քանիցս անգամ դիմում է Լիւալայ թաղի
հայոց դպրոցի հոգաբարձու պ. Ս. Տէր-Չաքա-
րեանին և վարժապետութեան պաշտօն է խն-
դում: Պարտն հոգաբարձուին լաւ յայտնի լինե-
լով Հաւաճեանի ինչ բարոյականութեան տէր լի-
նելը և որ ատոման գիտութիւն ունենալը, —
հարկէ, մերժում է: Այստեղից ծագում է Տաթևի
վանքի խոհանոցի ուսանողի թշնամութիւնը գե-
պի պ. հոգաբարձուն, սկսում է այնուհետև նրա
մասին զանազան կեղծոտ բարասանքներ անել
և մինչև անգամ փորձ փորձել նրան վնասելու:
Այդ բոլորը յայտնվում է տեղային դատաւորին
և Հայրենասէր իւր արժանաւոր պատիժը ընդու-
նում է, ինչպէս որ կը պատժուին ամեն մի լիւր
և անբարոյական մարդիկ:

Այդ բոլորից չը խրաւովելով, Հաւաճեանը իւր
թղթակցութեան մէջ դրաւարում է հոգաբարձու
պ. Տէր-Չաքարեանին, իւր թէ նա դպրոցի փո-
ղերի մէջ անադիւնութիւն է գործել և հրապարա-
կաւ հաշիւ է պահանջում: Թէն ոչ մի հոգաբար-
ձու պարտաւորութիւն չէ ամեն մի բախտա-
խնդիր Հաւաճեանի հաշիւ տալ, բայց հասարա-
կական կարծիքը փարատելու համար, ես հար-
կաւոր եմ համարում յայտնել, որ պ. Տէր-Չա-
քարեանը իւր հոգաբարձութեան հաշիւները ար-
դէն տուել է 1880 թուականի մարտ ամսի
16-ին, Լիւալայ թաղի հասարակութեանը, ի
ներկայութեան Թաւրիզի սրբազան առաջնորդի:
Նոյն հաշիւ պատճենը, վաւերացրած սրբ. ա-
ռաջնորդի ստորագրութեամբ, ուղարկուած է
ՎՄՄ-ին խմբագրատունը, որից պարզ երևում է,
որ Տէր-Չաքարեանը ոչ թէ դպրոցի փոլորի մէջ
անադիւն է վարվել, այլ 1633 կանն 5 1/2 չափ
էլ իւր գրպանիցն է ծախսել մի աղքատ դըպ-

րոցի գործերը առաջ տանելու համար:*) Եւ այդ
գումարը մինչև այսօր դպրոցը մնացել է նրան
պարտական:

Այդ հաշիւից յետոյ պ. Տէր-Չաքարեանը քա-
նիցս անգամ իւր հրաժարականը ներկայացրել է,
որպէս զի արձակվի հոգաբարձութեան պաշտօ-
նից, բայց թէ սրբազան առաջնորդը և թէ Լի-
ւալայի հասարակութիւնը, ի նկատի առնելով
նրա բազմամեայ անձնուէրը աշխատութիւնը
դպրոցի յառաջգլխութեան վերաբերութեամբ,
միշտ խնդրելով պահել են պարտին իւր պաշտօ-
նի մէջ:

Պ. Տէր-Չաքարեանի մատուցած ծառայութիւն-
ները, թէ Թէհրանի հայոց դպրոցին, թէ ալստե-
ղի դպրոցին և թէ մեր քաղաքի թատրոնական
գործին, ինձ ապիթ տուեցին ճշմարտութիւնը ե-
րեան հանելու համար գրել այդ նամակը, զգու-
շացնելով մեր ընթերցող հասարակութեանը Հա-
ւաճեանի նման մարդիկների մոլորութիւնից:

*) Մեր խմբագրատան մէջ ստացվեցաւ յիշեալ
հաշիւի պատճենը վաւերացրած Աստուածական
հայոց առաջնորդի ստորագրութեամբ:

Պ. Ս.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին երկու շաբաթվայ ընթացքում Գիւ-
ֆօրի մահուան լուրը օրից օր սպասում էր:
Գիւֆօր հաշակաւոր փառաքան և պետական
գործող էր, խիստ պահպանողական լիպտիտա-
կան հանրապետական, Թիւրք օգնական և մի
ժամանակ նրա հակառակորդ քաղաքական ա-
պարիդի վրա, դուքս դը-Բորգի կարիւնտից յե-
տոյ առաջին միջնորդ: Մարշալ Մակ-Մաճօնի
ժամանակ, վերին աստիճանի ազնւի և խիստ
բարձր մարդ, Գիւֆօր վերջին ժամանակները
քաղաքականութիւնից իրան հեռու էր բռնում
և մեծ մասամբ սպասում էր դիւրամ, Գիւֆօր ծըն-
վեցաւ 1798 թվին և մահանկղւած էր Ֆրանսիա-
յում պատահած զիւսաւոր շարժումներից և անց-
քերին: Նա միտաւ իւր կայսրածքում մինչև վեր-
ջին րօպէն պահպանելով իւր մտաւոր ընդունա-
կւթիւնները Համբուրգում հանրապետական լի-
նելով, նա հակառակ չէր և սահմանադրական
ազատամիտ միապետութեան: Նա ջերմանող
կաթօլիկ էր և վախենում էր արմատականութիւ-
նից, նա ցանկանում էր հանրապետութիւն ա-
ռանց հանրապետականների: Թիւրքի նման:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 20 յունիսի «НОВОЕ
Время» լրագրին Հոռօմից հեռագրում են,
որ 19-ին յունիսի հասան Խաւրիայի մայ-
րաքաղաքը սլավոնական ուխտաւորները:
Ախրակի օր կը կատարվի հանդիսւոր ժա-
մասացութիւն, երեքշաբթի օր նշանակված
է հրաժարական առիդէնցիա պապի մօտ:
Հարաւային կաթօլիկ պապականների իւրա-
քանչիւր պատգամաւորութիւն կը ներկա-
յացնի պապին մի առանձին ուղերձ: Ուխ-
տաւորների առաջնորդների մէջ երկպառա-
կութիւն է ծագել, նրանց մէջ չը կայ հա-
մաձայնութիւն: Խորվաթիայի եպիսկոպոս
Շարօմայէր և Լեհաստանի եպիսկոպոս
Լեդօլսոյսկի միմեանց ամենակատար թըշ-
նամներ են: Իւսս գիւղամիտական ա-
գէնտներ Բուտենիկ և Մոսօլով վերջ գրին
Վատիկանի հետ իրանց ունեցած բանակցու-
թիւններին և տմաւոյ արձակուրդ առնելով
հեռացան Հոռօմից: Կարծում են նրանց հե-
ռանալը մի տեսակ բողոք է պապի երկդի-
մի քաղաքականութեան գէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 22 յունիսի Պետական
բանկի 5% տոմսը առաջին շրջանի ար-
ժէ 95 ռ. 50 կ., երկրորդ 94 ռ. 37 կ.,
երրորդ 94 ռ. 37 կ., չորրորդ 94 ռ. 12
կ., ներքին 5% տոմսին փոխառութեան
տոմսը արժէ 228 ռ. 50 կ., երկրորդ 221
ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան
տոմսը արժէ 92 ռ. 75 կ., երկրորդ 92
ռ. 87 կ., երրորդ 92 ռ. 75 կ., ոսկի 7 ռ.
92 կ.: Բուսաց 1 բուրլ 1 օնցօնի վրա արժէ
24,75 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի
վրա արժէ 212 մարկ 75 պֆ., փորթի
վրա արժէ 262 ֆրանկ 25 սանտիմ: Բոր-
սայի տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ